Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 607 - Ա որոշման

«Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի
տանիքի ամրացում և արևային պանելների համակարգի նվիրաբերում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության - Բուսաբանական այգու (Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա) համար արևային պանելների համակարգի ձեռքբերում, համապատասխան շինության տանիքի ամրացման աշխատանքների իրականացում և արևային համակարգի տեղադրում՝ նվիրաբերման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն - Բուսաբանական այգի (Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա) (Հայաստան, 0040, Երևան, Աճառյան փող., 1 շենք (Ավան վարչ. շրջան)՝ բնապահպանության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	29 810 360 (քսանինը միլիոն ութ հարյուր տասը հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն – Բուսաբանական այգի (Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա) (Հայաստան, 0040, Երևան, Աճառյան փող., 1 շենք (Ավան վարչ. շրջան):
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի հուլիսի 10-ից մինչև 2021 թ. հոկտեմբերի 01-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Արևային էլեկտրասնուցման համակարգի միջոցով էլեկտրաէներգիա ստանալու նպատակով «Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին (Բուսաբանական այգի) նախատեսվում է նվիրաբերել արևային պանելների համակարգ՝ նախապես իրականացնելով նաև տվյալ շինության տանիքի ամրացման աշխատանքներ 29 810 360 (քսանինը միլիոն ութ հարյուր տասը հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 10-ից մինչև 2021 թ. հոկտեմբերի 01-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է արևային պանելների համակարգի կառուցում՝ իրականացնելով նաև տվյալ շինության տանիքի ամրացման աշխատանքներ 29 810 360 (քսանինը միլիոն ութ հարյուր տասը հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

20.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ